ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

"04" "հուլիսի" 2013թ.

ԹԻ – 13/36/17

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության առաքելությունն է նպաստել արդյունավետ հանրային քաղաքականությանը և կառավարմանը Հայաստանում՝ կանխարգելելու կոռուպցիան և ամրապնդելու ժողովրդավարությունը: Կազմակերպության նպատակներն ուղղված են նպաստելու քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումների համար բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը, աջակցելու թափանցիկ ու հաշվետվողական կառավարման համակարգի կայացմանը և խթանելու ժողովրդավարական գործընթացները Հայաստանում:

Ելնելով իր առաքելությունից՝ կազմակերպությունն իրականացնում է ՀՀ կառավարության 2009 թ. հոկտեմբերի 8-ի N 1272–Ն «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացման ընթացքի մոնիտորինգ:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն վերը նշված որոշման հավելված հանդիսացող «ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրով» Ձեր կառույցի, որպես պատասխանատու մարմնի, վրա դրված պարտականությունների շրջանակում իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝

Գործադիր տնօրեն — Վարուժան Հոկտանյան

Հայաստան, Երևան 0025, Այգեստանի 9 փող. տուն 6
Հեռ.՝ (374 10) 569910, (37410) 553069 • Ֆաքս՝ (374 10) 571399
info@transparency.am • www.transparency.am